

Ասոնց մէջ անուանին հանդիսացաւ Թաղիադին: Ասիկա մին էր այն հայ իշխաններէն (Աւագ, Դրդի Շահնշահի, Ելիկում որդի Լիպարտի եւն) որոնք մասնակցեցան Հուլաղու խանին արշաւանքին Բաղդատի ամիրապետին դէմ (1256 ին): Ի դարձին պաշարեց Հուլաղու Նվիրկերտ (Մարտիրոսաց քաղաք), որ յետ երկամեայ Խիստ պաշարման ինկաւ (1259) աւար թշնամեաց (Վարդան 150, Մաղլաքիա 40. Օրբել. 296): Թաղիադին այս արշաւանքէն հետը բերաւ լնտիր աւանդ մը՝ Ս. Բարդուղիմէոսի Նշխարքները, զո՞ր ձեռք անցուցած էր Նվիրկերտի մէջ. այս մասին կը գրէ Մաղլաքիա էջ 41. Իսկ մեծ իշխանն հայոց Թաղիադին անուն յազգէն Բագրատունեաց ըմբունեալ երէց մի Ասորի եւ ի Խիստ ածեալ, եգիտ զաշ սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի. եւ տարեալ մեծաւ ուրախութեամբ յաշխարհին իւրեանց յարեւելք եւ եդ ի վանս ածրունեաց՝ որ ասի Սադուն անուն ետ նմա. եւ առեալ Սադունն տէրն Հաղբատայ մեծ եւ հոչակաւոր սրբոյ ուխտին, եղ զուրբ աղն Բարդուղիմէոսի առաքելոյն ի սուրբ ուխտն Հաղբատ. եւ է անդ ստուգապէսո:

Թաղիադին Կ'անհետանայ այնուհետեւ պատմութեան մէջ. իր Պաւակներէն կը յիշուի յանուանէ միայն՝

#### 10. Սարգիս:

Ինչպէս կ'երեւայ՝ Թաղիադինի մահուամբ Կիւրիկեան հին փառքի վերջն կայծերն ալ կը սափչէին տակաւ տակաւ. Սարգիս իւր փառապանծ նախնեաց վերջն աղօտ Ծյոն կը ներկայանայ: Ասիկա փոխանակ նոր քաջութիւններով ժառանգութիւնն ապահովելու, ամրացնելու եւ նոյն իսկ ընդարձակելու, կամաց կամաց կ'օտարացնէր եղածն ալ, մաս առ մաս ի վաճառ հանելով: Թերեւ ժամանակները փոխուած էին: Իր անուան միակ յիշատակութիւնն ունիք Տետեւեալ արձանագրութեան մէջ որ կը գտնուի Հաղբատ (Բրոսէ. Description, p. 23, Կոստանեաց, էջ 93):

“Ի թուին Հայոց ՈՂԸ (1249). Կամաւն Աստուծու ևս Գրիգոր... մեծ յուսով ապահնեցա ի սուրբ Նշանս եւ զիմ հոգեքաժին զեղն, որ գանծով գնեալ էի ի Թաղիաթինի որդեանցէն ի Սարգսէն, զԱզուաւածոր՝ որ կոչի Մահմուտ, որ ետու ի սուրբ նշանս... ընկալան... եւ սահմար ի սուրբ նշանս... ընկալան... եւ սահմար”:

Նեցին զամէն եկեղեցիքս իմ՝ անուն պատարագել զ.Ք.իստոսո... եւ զսեղանն յիմ՝ անուն դնեն, որպէս զնանային...: Եւանդութեան մը համեմատ “Բարսամ գիւղացի Մելիք Առատամի Նախնիքն ծագած են Բագրատունի թագաւորացն սերնդից, այս է Կիւրիկեան թագաւորների յետագաներիցու, Բարխուդարեան՝ Արցախ 319): Գժուարին է Հիմուած աւանդութեանս վրայ, որ իւր սկիզբն ունի 1600 էն, գտնել կապակցութիւն մը Թաղեալինեան շառաւիլերու Մելիք Առատամի նախնեաց հետ:

Հ. ՂԵՐՈՒԴ ՄՈՎՍԵՍՅԱՆ



#### ԶԵՅՑԱՐԱՀԱԼԻ ԺՈՂՈՎՐԴՈՒԿԵՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԸ

— (Հայուածութեան)

#### 12. Հանելուկներ:

Հանելուկները կենդանական, բուսական, կրօնական, ծաղրական եւ այլ բովանդակութեամբ եւ չափական ձեւով հիւսուած կարճ մոքեր են, որոնց մէջ փոխաբերական իմաստով նկարագրուում են մի քանի առարկաներ ու երեւոյթներ, որոնցով ժողովուրդը յայտնագործում է նրանց բովանդակած գաղափարը:

Մեղանում հանելուկների ծագման պատմութիւնը բաւական հին է: Էրու դարից սկսած՝ նրանք մեր զրականութեան մէջ երեւան են գալիս: Այս դարի գիտնական Անանիա Շիրակացին է, որ առաջին անգամ շարահիւսում է արախճան՝ խորագրով հանելուկներ: Ապա, Ժբոր դարի ամենամեծ կրօնաւորը՝ Ներսէս Շնորհալին գրում է ժողովրդի բարբառով 120 հանելուկներ, ժողովրդի զուարձութեան համար: Այնուհետեւ զրականութեան այս նոր տեսակը մեղանում հետզետէ մշակւում է, ընդարձակում եւ սիրելի զառնում ժողովրդին, ինչպէս է եւ այժմ: Յետագայում մեր բանաւելներն առանձին ուշադրութիւն են դարձնում հանելուկների վրայ եւ հաւաքում ժողովրդի

բերանում շրջող հանելուկներից շատերը, այսպէս որ հայ ժողովրդական գրականութիւնն այսօր այդ տեսակի գրուածքներով բաւական հարուստ է: Բաց արէք Արիստակէս վարդ. Տէր-Սարգսեանի «Պանդուխտ վանեցին», Գէորգ Տիգրանեանի «Առածք, ասացուածք եւ զրցցք», և, Հ. Խ. Խ. Խ. Թիւճեանի «Բիւրակ», Երուանդ Լալայեանի «Ազգագրական հանդէս», Սարգիս Հայկունու «Ժողովրդական երգ, առածք, հանելուկ», և եւ այլն եւ դուք նրանց մէջ պիտի գտնէք հայաբնակ զանազան քաղաքների եւ գիւղերի հանելուկները, որոնց բովանդակած առարկաներն ու երեւոյթներն են օր. ամպ, անձրեւ, կարկուտ, ձիւն, սառոյց, քամի, փոթորիկ, արեգակ, լուսին, աստղ, գիշեր, ցերեկ, արշալոյս, առաւօտ, ջուր, աղբիւր, լիճ, գեա, ծով, ովկիանոս, հող, արօր, գութան, տուն, կով, ոչխար, կաթ, աքաղաղ, հաւ, ձու, ձի, ուղար, էշ, օձ, գլուխ, աչք, բերան, մօրուք եւայլն:

Զահարմահալի բանաւոր գրականութեան մէջ եւս կան բազմաթիւ հանելուկներ, որոնք յօրինել, շարադրել են հէնց իրենք գիւղացիները բերանացի ել աւանդել են սերնդից սերունդ: Այդ հանելուկները, որոնք գիւղացիների սրամութիւնն են զարգացրել եւ մի եւ նոյն ժամանակ նրանց մարի հնարագիտութեան նպաստել՝ մեծ մասամբ պարզ, բայց բաւական գեղեցիկ հիւսուածքներ են:

Ընդհանրապէս գրանք, ինչպէս հայկական միւս հանելուկները, սկսում են «էտ ինչն է», բնորոշ բառերով: Այժմ առաջ բերենք բղածները:

Էտ ի՞նչն է՝

Պատի կճում,  
Համօվ ապուր (ընկոյզ):

Անջուր ջաղաց,  
Անկրակ բաղաջ (մեղքի բաղարջ):

Մութը մարաք,  
Լիքը տաշէդ (բերան):

Զիկի-չիկի մլրատը,  
Ցամմին բանի հասրաթը (գրամ, փող):

Յէրգան աղեք,  
Մէրը ծաղիդ (ճրագ):

Դափիք դրբեփոց,  
Մէջը խառնոց (հրացան):

Ալ եղնիք, պալ եղնիք,  
Կանգնած, պաշարած եղնիք (պատ):

Յէրգար-յէրգար յարտերը,  
Մէջն ալաչայ բանդէրը (ամնդուիք):

Յէրգար հոր,  
Մէջն ալաչալա խնձօր (մլծ պաս):

Մանէն ման արած,  
Պատին իախ արած (ճախարակ):

Մութն տուն,  
Բոջիք քուն (թոնիք):

Պատի բօխչայ,  
Մաղէ բուռգայ (աչք):

Կարմիր ուտեմ (յորեն)  
Ճէրմագ ածեմ (ալիւր) } (լըաղաց):

Լինի՝ ըռծեմ դնեմ,  
Չինի՝ կոծեմ դնեմ (ասեղ թելել):

Ինքն է մէ թիզ,  
Բանում իս երկու թիզ (պարսկական գրչաման):

Բոլոր-բոլոր մէջը ծակ,  
Եշ ես, թէ չասես դրդագ (գլխարկ):

Կարմիրյնեմ (բուռդ դնեմ  
Ճէրմագյնեմ) ծակդ դնեմ (Զատկական ձու):

Խատի պուպուզ, ինդի պուպուզ,  
Մարթքանց յառաջ պուպուզ (զալեան):

Ունի, ունի, բուն ունի,  
Ճնջը զի կտուց ունի (ս/սեռ):

Լուն էկաւ, լնթին էկաւ,  
Խորողակից մէ մարթ էկաւ (դոյլ):

Կարմիր ձիավշր,  
Դէղին դաքվօր  
Ճէրմագ շապկավշր (փշատ):

Ալրէշում խալին փուած է,  
Նուան տանը շարած է,  
Օսկով ջամը կոռծած է (երկիւր):

Փէդ ունի, նաջառի բան չէ,  
Ալուր ունի, զաղչի բան չէ,  
Կարմիր է, բաղազի բան չէ (փշատ):

Քէզի զրգեմ կունդուլ քարի,  
Օխտը ծակ վրէն շարի,  
Մահնին դըդի վէկալ արի (գլուխ):

Լին-էլին, դրէն ոէլին,  
Տարան-բերին, օսկուը տանը թաղէցին,  
Ցարունը գեղը բաժէցին (խնոցի):

Մէ զադ ունեմ ունդուլ է,  
Զուխտ յանգը ջին կունդուլ է,  
Մէկ զիլ է ու մէկ թուլ է (գորու):

Աւլանոց, ուշ պլստանոց,  
Կարմիր քթոց, չըխ չըխկանոց (հուռա):

Անօլոր դէրցան,  
Անծակ մարքրիդ,  
Տէրը տվէց,  
Բանդէն կտրէց (խաղող):

Իմ ըռնադը,  
Քու կըռնադը,  
Իմ սուլուլը,  
Քու դըռծակը (աղօրիք):

Տամ խփին,  
Ընդնի շըռթին,  
Սեւ օխչըրին,  
Քշկուլ հաւին (ձուածեղ):

Լարը լսր,  
Էրկթէ լսր,  
Մէ ջուխտ հըլուն,  
Էրթալ ու դալ (աչքեր):

Մէ զադ ունեմ, զադ չէ,  
Արօջ կօնի, տալար չէ,  
Չու կօծի, հաւ չէ,  
Հարամ է ու հալալ չէ (կրեայ):

Կաւէ կօլոլակ (տաշտ)  
Մուէ ճօլոլակ (կովի պտուկը) }  
Դէղին դաքամիօր (դալ)  
Ճէրմագ հալիվօր (կաթ)

Մէ զադ ունեմ  
Կրկու հօղին (սոքերը)  
Կրկու կօղին (թերերը) }  
Կրկու զղղիչ (աչքերը)  
Մէ բղբղիչ (կտուցը)

Մէ զադ ունեմ  
Զյու հօղին (սոքերը)  
Ութը կօղին (պտուկները) }  
Կրկու զղղիչ (աչքերը)  
Մէ աղմբորիչ (պոշը)

### 13. Առածներ եւ ասացուածներ:

Առածները կարճ ու կորուկ չափական  
զոյցներ են, որոնց մէջ ժողովուրդն արտայա-  
տում է մի ճշմարտութիւն կամ փիլիսոփայա-  
կան մի հայեցք, իսկ ասացուածքները պարզ  
սրախօսութիւններ են, որոնց ժողովուրդը գործ  
է ածում, երբ ուզում է այլաբանորէն իր միտքն  
արտայայտել:

Թէ առածները եւ թէ ասացուածքներն  
արդիւնք են հայ ժողովուրդի դարեւոր փորձառու-  
թեան ու սրամութեան եւ որոնց գլխաւոր  
նպատակն է իրենց մէջ պարունակած բարո-  
յական կանոններով ժողովրդին փորձառութեան  
բովից անցկացնել:

Հայ ժողովուրդը մինչեւ օրս էլ սրբու-  
թեամբ պահել է իր նախնիքներից աւանդ  
մացած առածներն ու ասացուածները եւ  
նրանցով էլ առաջնորդում է նա իր կեանքի  
զանազան հանգամանքներում, ինչպէս օր վե-  
ճաբանութիւնների, վէճերի, բանակուների եւ  
նոյնիսկ հասարակ խօսակցութիւնների ժա-  
մանակ:

Առած-ասացուածները մեզանում բաւա-  
կանին հաւաքուած են, դ. եռ 1843 թուական-  
կանին սկսած՝ նախ “բազմավէպը, եւ ապա  
նորից սկսած՝ նախ “բազմավէպը, եւ ապա  
կունկը” (շնորհիւ քուարեանի) հրատարա-  
կում են հատ ու կտոր առած-ասացուածքներ:  
Դա գործի սկիզբն էր: Այնուհետեւ շուտով  
զարկ է ստանում, եւ աշա կարճ միջոցում,  
շնորհիւ մեր քանքարաւոր բանասէրների: Եսու են  
տեսնում բազմաթիւ ուշադրութեան արժանի  
առածներ եւ ասացուածքներ: Այդ ուղղու-  
թեամբ մեր բանահաւաքներից հայ ազգագրու-  
թեան գնահատելի ծառայութիւն մատուցել են  
առածներ եւ ասացուածքներ: Այդ ուղղու-  
թեամբ մեր բանահաւաքներից հայ ազգագրու-  
թեան գնահատելի ծառայութիւն մատուցել են  
այս գարբ: Այդպիսան, Հ. Վ. Պարտիզակցի,  
Հ. Գարբը: Այդպիսան, Սարգիս Հայկունի, Տէպիկանց,  
Տ. Կէրէնց, Հ. Վ. Ճուլարտեան, Գ. Տէր-Աշէք-  
ր. Շահումուն, Յ. Ալլահվէրդեան, Երուանդ Լա-  
լայեան, Արիստակէս վարդ, Տէր-Սարգսեան,  
Մ. Աբեղեան, Յովհ. Խօջայեան եւայլն, որոնք  
Մ. Աբեղեան, Յովհ. Խաւոքիչ եւ հրատարակել են զա-  
խնամքով հաւոքիչ եւ գիւղերի առած ասա-  
ցուածները:

Զահարմահալի բանահաւաքներ մէջ եւս  
կան մի շարք առածներ եւ ասացուածներ, որոնց  
մէջ երեւան են գալիս գիւղացիների լնտանեկան,  
հասարակական կեանքն ու աշխարհայեացքները:  
Հասարակական կեանքն էր հայեցքին հայեցքին երես:  
Դրանցից մենք կարողացնք հա աքել լնդա-  
մենը 98 հատ, որոնք այսօր անգիր շնչում են  
գեղաւիկերի բերաններում: Տիանենք:

Անշեղը մօրը քը քաշի ու աղէն հօրը:  
Աշտ է բաղի, թէ մաղսդ:  
Աղու հաց՝ սիրալ բաց:  
Աղլէն իրա պոչն է շհադ բռնում:  
Աղքատ՝ հպարտ:  
Անձարը կուտի բանջար:  
Աշխարքը դմադ է ու մարթը դանագ, կարի  
ու ուտի:

Առուտուր է, յափ ու կուլ իս չեմ:  
Ասծու պահած գառը, գէլը չի տանի:  
Բանդ բուրթ է:

Գեղ գղեն, գաւառ մանեն, անումը ճար-  
տարին լինի:

Գեղ կանգրի, գերան քիուրի:  
Գեառուտ էծն ախպրի տկիցն է ուղում  
ջուր խմի:

Գէն ինչ կուղի, մէ թիֆան քշեր:  
Գժի աղունն Աստուած կալայ:  
Գիլու գլխին ավէտարան կարթցին, ասաւ. թէզ  
արէք, գեալէս գնաց:

Գողը գողից գողացաւ, Աստուած զերեւը  
զարմացաւ:

Գողն ինչ կուղէ, մութը քշեր:  
Դառը դադէց, մահրում կէրաւ,  
Դարրնին դանակ չինի, դերձակին պատանը:  
Դուսը քահանայ, տունը սատանայ,  
Եզը կանգրէցնում են, տկիցը հորթ են  
քաշում:

Եղն օր վեր ընդնի, դանդվորը քշատնը:  
Ես աղա ու դուն աղա, բա մեր աղունն  
օլ կաղա:

Ես բրթեմ ու դու խրթես:  
Ես քու ումուգօվ, դու Ասծու:  
Ես քու հմար, դու ում հմար:  
Երգենիցը ինչ դա՝ գէդինի տակն է:  
Էրէլէն մհանայ, նանը կշտանայ:  
Էրկաթը գանի տակ է քծեծ են:  
Էշն ինչ դիտի՝ նուշն ինչ է:  
Էշ հեծնէլը մէ բան է, ցած գալը մէ անում:  
Էտ մէ ըխտ է, օր փաքինի դռան քչօքի:  
Ընտին ասին. շինքդ ծուր է մուռը, ասաւ.

Ինչու է շիդագ:

Ընտին գդալօվ ես ջուր տալիս:

Ընտի խաղը կարմնջին գուքայ:

Ինծի պահէ բօխչա միշում, գեղի պահէմ  
մարթա միշում:

Իմացողին մէդ ասա, չիմացողին հըզար:

Իմն յաշի, ով կուղի թող հաջի:

Ինչ իլիկն է, ինչ պիլիկն է, ինչ նախրարձն  
է, ինչ իր կնիդն է:

Ինչ օր ցանես, էն քհնձես:

Լիքը գնացիր, դարդագ էկա՞ր:

Խաւանիչ աղանձ, կարսափ մուկ:

Խելքդ հացիդ հեղ կերէլ ես:

Խելքը մենձ ու պստի չե:

Խելքն խրատն ինչ կօնի, սէվին սապոնն  
ինչ կօնի:

Խօսքէրը վերցնէս ու իրանց կրակէս (պարսիկ-  
ների համար են ասում):

Ծառ չես օր քամու չդիբչե:

Ծուռն ակոսը մենձ եղիցն է:

Կատուին ասին. հէրդ է լաւ, թէ մէրդ,  
ասաւ, նառւ, նառւ:

Կատուի դիրը միս չնդաւ. ասաւ, յէսօր  
Ուրբաթ պաս է:

Կարմիր կօվի պէս կթվէցիր, կթվէցիր ու էն  
դոդէն տվիր, շուռ տվիր:

Կեր ու խումդ փրի հետ, առուտուր  
օտարի հետ:

Կուժը ջըի ճամփին քը կօտրվի:

Կուժ քե ասեմ, փառչ դու լսէ:

Հաստ ու բարագ մէ դին է, վայ բարագ

մանօղին:

Հաց ու պանիր քիչ դիր ու շատ ծամիր:

Հենց գիդի հացի ծալը հալվայ կայ:

Հինդ ճատիցդ օր մէգը կտրէս, յարուն դուր

դուքայ:

Զեռը ձեռ կշանչնայ:

Զին ու ջօրին կովէցին, էշը մէջտեղ ոտա-

տակ կէրաւ:

Չուգը գլսիցն է հօտած:

Չուգը ծօվում քմենձնայ:

Ճրաը տաշտէ տակը, դուռը չի լուս տայ:

Ման արած, պատին կախ արած:

Մեխիկը լալօվ, պարտկը տալօվ:

Մէ ձեռը ձեռ քվլայ, էրկուսը յէրէս:

Մէդ եմ ու բէդ եմ:

Մէգը մէգին մէ բաղ տվէց, մէգը մէգին մէ

ծաղիդ շովից:

Մէգը մէգօվ, էրկուսն Աստօվ:

Մէգ օր բարի բարգէնթաք, մէդ օր սէվօվ

անդոթաք:

Մկան ձեռը ջաղցին օքնէ:

Մուկն իլ դուան առիւծ է:

Մօթէ քու մօզն, մի էրթայ դուռն ի պօղին:

Յամմէն ծաղիդ իր թթու չի ասի:

Յամմէն մարթ կրակն իրա բաղջի տակն է

քաշում:

Յամմէն օր ջուրը գէրան չի բէրի:

Յամիշա տէյտէրը ձիթօվ գաթա չի ուտի:

Յարունն յարնօվ չեն վլայ:

Յեթումի տէրն Աստուած է:

Յէրէս են տուի, աստան իս ուղում:

Յէրէսը հանց սիբ-բլի, տէկէհանց սուր ածելի:

Յինչուդ դուռը շտաս, չեն բանայ:

Յինչուդ էրէսէն չայ, մէրը ծիծ չի տայ:

Յինչուդ շուշանը դարթրվի, ժամմէրը կար-

յադվի:

Յինչուդ չդայ յէդինը, չի յիշուի յառչինը:

Յունքը շինէլու տեղ յաճնէ էլ քօնացրին:

Շատ դադօղին շալէ շապիք, քիչ դադօղին:

Պատիքը շան միս չի ուտի:

Շունը շնէն, էրկուսը մէ տնէն:

Շունը տանը քքաշի, հարսը կէսերը:

Ուխուը հէձէլ ես կուսէ կուս ես ման գալիս:

Ոչ դու ինձի ասա քոռ, ոչ ես քէղի ասեմ:

Շուստայ էն է, օր զլուխն է եկի:

Պառաւը մեռաւ, տեղը լէնցաւ:

Ջուն ասա ու ջան լսէ:

Քոռն ինչ կուղի, էրկու յաճկ:

Այսանաս

ՍՐԱՄՄ ԵՐԵՍԵՆԱԿ

